

H.Z. GHAZARYAN

PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING ATTENTION AND CONTROL
IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

The peculiarities of the Armenian, Russian and English phraseological units with the component “eye” expressing attention and control are considered. The studies reveal some similarities and differences of the mentioned peculiarities which come to prove the similarities and differences in the linguistic thinking of the peoples speaking the mentioned languages.

Keywords: metonymy, phraseological, unit, meaning, semantic shade, equivalent, similarity, difference, linguistic thinking.

ՀՏԴ 811.19'161.1'111:159.922.2

Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՐԱԿ ԵՎ ՀՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են *կրակ* և *հող* բաղադրիչներ պարունակող դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ներկայացված են դրանց իմաստային, կառուցվածքային, քերականական ընդհանրություններն ու տարբերությունները՝ կախված նշված լեզուների կառուցվածքային առանձնահատկություններից և ազգային լեզվամտածողությունից:

Առանցքային բառեր. դարձվածային միավոր, բաղադրիչ, իմաստային, քերականական տարբերություններ, կառուցվածքային առանձնահատկություններ:

Ներածություն: Դարձվածքի հիմնական բաղադրիչը լեզվի ընդհանուր բառաֆոնդին պատկանող և մշտական գործածություն ունեցող բառ է: Մտածողության և կենսափորձի զարգացման հետ մարդը բառերին նոր իմաստներ է սովել ու իր մտքերն ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով կազմել է այնպիսի բառազուգորդումներ, որոնց բաղադրիչները հանդես են եկել փոխաբերական իմաստներով, և բառակապակցությունը ձեռք է բերել նոր իմաստ: Տարբեր ժողովուրդներ համանման երևույթների վերաբերյալ տարբեր դարձվածքներ են կազմել՝ արտացոլելով ժողովրդի կյանքն ու մշակույթը, պատմությունը, հոգեբանությունը, կենցաղային պայմանները, ազգային ինքնատիպությունն ու ժողովրդի մտածողության յուրահատկությունը: Վերահիմաստավորված բառակապակցությունը կիրառվել է մարդուն, առարկաներն ու իրավիճակը բնութագրելու համար, խոսքի ուժն ազդեցիկ և պատկերավոր դարձնելու նպատակով:

Դարձվածքները կարող են կազմված լինել բնության առարկա անվանող բառերից, որոնք կարող են արտահայտել որևէ իրավիճակ, պատկեր կամ հատկանիշ: Հին աշխարհի փիլիսոփաները աշխարհի սկիզբը կապում էին բնության տարրերի հետ, որոնք անբաժանելի են մարդկային կենսագործունեությունից: Դարձվածքների այս բաղադրիչների շարքում կարելի է նշել **կրակ** և **հող** բառերը, որոնցով կազմված կայուն բառակապակցությունները փոխաբերական կերպով մեկնաբանում են բազմաթիվ երևույթներ, նշում դրանց առանձնահատկությունները:

Կրակ նշանակում է այրվող նյութի՝ առարկայի շուրջը շիկացած լուսավորող գազեր, հուր, բոց, խարույկ, հրդեհ: Փոխաբերական իմաստով նշանակում է՝ 1.լուսավորություն, 2.պատուհաս, փորձանք, 3.անտանելի, անհանդուրժելի (մարդ), 4.սաստիկ ջերմություն(հիվանդության ընթացքում), 5.տապ, խիստ շոգ. 6.ոգևորություն, եռանդ, ավյուն, 7. դյուրաբորբոք, պոռթկուն, 8. բուռն զգացում, սեր, կարոտ, 9. դաժանություն, խստություն, 10. թանկություն[1]:

Հայերենում **կրակ** բաղադրիչով կազմված են բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք խորհրդանշում են՝

• *դժվարին պայմաններ, վրանգ, փորձանք, դժբախտություն, դաժանություն.*

Կրակը գցել (հրեն) – 1.շատ աշխատել, ջանալ, 2.փորձանքի՝ պատուհասի մեջ ընկնել: **Կրակի բերանը տալ** – դժվար դրության՝ փորձանքի մեջ գցել: **Կրակի գիծ** – այն վայրը, որտեղ անմիջականորեն տեղի են ունենում պատերազմական գործողությունները: **Կրակը գցել մեկին** – դժբախտացնել, փորձանքի մեջ գցել: **Կրակն ընկնել** – 1.հրդեհվել, 2.փորձանքի՝ դժբախտության մեջ ընկնել, ինչ անելը չիմանալ: **Գլխին կրակ վառվել** – 1.խիստ վշտանալ, 2.մեծ դժբախտության հանդիպել: **Կրակի հեղ խաղալ (կրակի հեղ կատակ մի արա)** – կյանքը վտանգի ենթարկել, վտանգավոր քայլ անել: **Կրակի մեջ ընկնել** – փորձանքի մեջ ընկնել, դժվար կացության մեջ ընկնել: **Երկու կրակի մեջ մնալ** – երկու կողմից փորձանքի մեջ ընկնել, դուրս գալու ելք չգտնել, անելանելի վիճակի մեջ գտնվել: **Կրակ ու պարիժ /կրակ ու պարուհաս /կրակ ու ցավ** – փորձանք, պատուհաս, չարիք: **Կրակից դուրս գալ, բոցի մեջ ընկնել** – մի փորձանքից ազատվելով մեկ ուրիշի դեմ առնել, մրից դուրս գալ, մրջուրն ընկնել: **Կրակի բերան (խսկց.)** – պատերազմում առաջավոր գիծ, կյանքին սպառնացող վիճակ: **Կրակի կամուրջն անցնել** – փորձանքի մեջ ընկնել և հաղթահարել: **Գլխին կրակ բերել** – փորձանքի՝ դժբախտության մեջ գցել: **Կրակի մեջ տապակվել** – բարդ դրության մեջ տանջվել: **Կյանքի կրակը հանգցնել** – մեռցնել:

• *եռանդ ու ոգևորություն, սիրո բուռն զգացում.*

Կրակ թափվել վրայից – շատ աշխույժ, գործունյա լինել: **Կրակը դեռ չի մարել(սրտի, աչքերի)** – դեռևս մեկի մեջ կյանք՝ սեր՝ եռանդ կա: **Կրակ գցել սիրտը** – սեր՝ կարոտ՝ փափագ առաջացնել: **Կրակ կտրած** – ուժեղ թափով, տենդագին: **Սրտում կրակ վառել** – բորբոքել, հուզել, սիրտը կրակ գցել՝ սիրահարեցնել: **Կրակի կտոր** – շատ աշխույժ, շարժուն: **Կրակի նման** – 1. ճարպիկ, աշխույժ, 2. չափազանց արագ, սրարշավ: **Կրակ ու բոց (դառնալ, ժայթքել, կտրել)** – եռանդուն, ժիր, աշխույժ: **Հոգու մեջ կրակ գցել (բնստ.)** – հոգին հուր ձգել, զգացմունքներ բորբոքել, **հոգու կրակ** – զգացմունքներ, ապրումներ:

- զայրույթ.

Գլխին կրակ վառել – խիստ բարկանալ, մոլեգնել: **Կրակ կտրել /կտրվել** – 1. սաստիկ բորբոքվել, զայրանալ, **Կրակը գլխներին թափել** – սաստիկ բարկանալ: **Աչքերից կրակ թափվել/ցայտել, ժայթքել** – 1. խիստ զայրանալ, 2. սաստիկ գրգռված լինել:

- հրդեհ.

Կրակի(ն) տալ – հրդեհել, վառել, կրակի մատնել, ոչնչացնել: **Կրակ գցել/դնել /ձգել** – 1. հրդեհել, կրակ տալ, 2. այրել, վառել, 3. վտանգի ենթարկել: **Կրակի ճարակ դառնալ** – հրդեհվել, այրվել, ոչնչանալ: **Կրակի ճարակ դարձնել** – հրդեհել, այրել; **Կրակի մատնել /կրակի(ն) տալ** – հրդեհել, այրել, ոչնչացնել: **Կրակի վրա յուղ/ձեթ լցնել/ավելացնել/ածել** – կրակն ավելի բոցավառել, բորբոքել: **Կրակի բաժին դառնալ** – այրվել, ոչնչանալ: **Կրակի աչք** – կրակի, խարույկի վառվող մաս, բոցկլտացող մաս:

- թանկություն.

Կրակի գին – խիստ թանկ: **Կրակի գին ունենալ** – շատ թանկ արժենալ:

- թշվառություն, անելանելի, վրանգավոր իրավիճակ.

Խեղճ ու կրակ /մեղք ու կրակ – անօգնական, թշվառ, ողորմելի: **Որ կրակն ընկնեմ/ընկնի** – ինչ անեմ/անի, գլուխս որ քարով տամ, անելանելի կացության մեջ լինել, անելիքը չիմանալ: **Կրակի կերակուր դառնալ** – ոչնչանալ, այրվել, կործանվել: **Մի կողմը կրակ, մյուս կողմը՝ ջուր** – ամեն կողմից վտանգի, փորձանքի մեջ:

- անհանգստություն.

Աստծու կրակ – 1. չարաբարո, դաժան, 2. չարաճճի, անհանգիստ, 3. ցավ, պատիժ: **Սև կրակ** – տաժանակիր կյանք: **Բաբելական կրակ** – 1. տանջալից վիճակ, 2. շատ չար երեխա: **Անքուն կրակ** – շարունակ անհանգստացնող, տանջող բան: **Անհուր կրակ** – փորձանք, դժբախտություն [2]:

Ռուսերենում հանդիպում են огонь բաղադրիչով հետևյալ դարձվածային միավորները, որոնց մի մասը համարժեքներ ունի հայերենում և անգլերենում,

մյուսները հատկանշական են միայն ռուսերենին և կարող են տարաբաժանվել իմաստային նույն խմբերի մեջ:

В огонь и воду (идти) за кем, для кого – անձնուրաց, խիզախ արարքներ կատարել, կրակը նետվել, to go through fire and water. **Днем с огнем** – մեծ դժվարությամբ, ցերեկը ճրագով չես գտնի: **Огнем и мечом** (գրք.)-դաժանաբար, հրով ու սրով: **Упустить огонь** – պահը բաց թողնել: **Между двух огней** – երկու կրակի անանքում - between two fires – վտանգը սպառնում է երկու հակառակ կողմերից: **Играть с огнем** – կրակի հետ խաղալ – to play with fire – անգուշաբար վարվել՝ չմտածելով հետրանքների մասին: **Подливать (подлить) масла в огонь** – կրակին յուղ լցնել, հրահրել, հարաբերությունները սրել, pour oil on the fire. **Пройти сквозь огонь, воду и медные трубы** – շատ փորձությունների ենթարկվել, հուր ու ջուր անցնել: **Предавать огню и мечу** – հրի ու սրի մատնել, ոչնչացնել, այրել: **Дыма без огня не бывает** – առանց կրակ ծուխ չի լինում – there is no smoke without fire – առանց պատճառի ոչինչ չի լինում: **Правда в огне не горит и в воде не тонет** – ճշմարտությունը չես թաքցնի: **С огоньком** – տարված, ոգևորությամբ: **Таскать каштаны из огня** – կրակից շագանակներ հանել - pull chestnuts out of the fire – դժվար գործ անել ուրիշի հաշվին [3]:

Անգլերենում հանդիպող **fire** բաղադրիչով դարձվածային միավորների մի մասը ինքնուրույնաբար է առաջացել, մյուսները, թերևս, նմանակությամբ կամ պատճենմամբ: **Catch(take) fire** – այրվել, բոցավառվել, **Build a fire under smb** – ստիպել ինչ-որ բան անել: **Burn like fire** – վառվել կրակի պես: **Draw fire from smb (upon oneself)** – կրակն իր վրա վերցնել: **Drive out (fight) fire with fire** – հարվածել թշնամուն իր իսկ զենքով: **Fire and fury** – կրակ և կատաղություն, կիրք: **Fire in one's belly** – նախաձեռնություն, ձգտում: **Go through fire and water** – անցնել կրակի ու ջրի միջով, դիմանալ բոլոր փորձություններին, пройти сквозь огонь и воду. **Like a forest fire (like wild fire)** – աներևակայելի արագությամբ: **Pull (snatch, save) smb (smth) out of the fire** – փրկել փորձություններից, ոչնչացումից: **A running fire** – 1. քննադատությունների կարկուտ, 2. ռազմ. կրակահերթ: **Stand fire** – 1. դիմադրել դժվարություններին, 2. դիմանալ քննադատությանը: **Strike fire** – սուր արձագանք առաջացնել: **Between two fires** – երկու կրակի արանքում/մեջ – между двух огней. **With fire and sword** – հրով ու սրով, огнем и мечом. **Fire the first/opening shot** – առաջին քայլն անել: **Don't play with fire** – կրակի հետ մի խաղա: **There is no smoke without fire** – առանց կրակ ծուխ չկա – нет дыма без огня. **Full of bush fire** – եռանդուն, կենսուրախ, կրակի նման/պես, աշխույժ, կրակի կտոր: **Where 's the fire**

(խակց.)- կրակ հո չի ընկել - что вы торопитесь, как на пожар- շտապելու պատճառ չկա: **Pull chestnuts from the fire** – таскать каштаны из огня – կրակից շագանակներ հանել ուրիշի միջոցով, ուրիշին վտանգելով իր նպատակին հասնել: **Play with fire** – играть с огнем – կրակի հետ խաղալ, վտանգի ենթարկվել, անզգույշ վարվել: **Set fire to smb** – սրտում կրակ վառել, հուզել, ոգեշնչել: **Pour oil on the fire** – подливать масла в огонь – կրակի վրա յուղ լցնել, կրակը թեժացնել, կրքերը բորբոքել: **One's eyes flash/shoot fire** – աչքերից շանթ ու կրակ թափել-метать искры (о глазах) – խիստ բարկանալ, հուզվել [4]:

Հողը բացատրվում է որպես՝ 1. երկրի երեսը ծածկող փուխը փոշենման նյութ, 2. երկրի երեսի շերտը, գետին, 3. մշակվող կամ մշակելի հողամաս, 4. երկիր, ցամաք, 5. չորս տարրերից մեկը, որոնցից կազմված է ամբողջ բնությունը, 6. փխր. գերեզման, դամբարան, 7. նպաստավոր պայմաններ:

Հող բաղադրիչով դարձվածային միավորները հայերենում հանդես են գալիս բազմազան իմաստներով և խորհրդանշում են՝

- *հիմք, հենարան.*

Ուրքի տակ հող չունենալ – հաստատ հիմք չունենալ: **Ուրքերի տակ ամուր հող գգալ** – հաստատ հիմք, հենարան ունենալ: **Ուրքերի տակ հողը այրվել/տափանջվել (գրք.)** – հենարանը, հիմքը անհաստատ դառնալ: **Ուրքի տակի հողը կորցնել** – ինքնավստահությունից, հաստատուն հիմքից զրկվել:

- *հայրենիք.*

Հայրենի հող /մայր հող – հայրենիք: **Հողից պոկել** – հայրենիքից հեռացնել:

- *նպաստավոր պայմաններ.*

Հող պատրաստել - անհրաժեշտ նախապայմաններ ստեղծել որևէ գործ կատարելու համար: **Հողը շոշափել** – նախապես որևէ բան պարզելու՝ հանգամանքներին ծանոթանալու փորձ անել: **Պարարտ (պողաբեր, հարուստ, բերրի) հող/գետին** - գործունեություն ծավալելու, զարգացման նպաստավոր պայման(ներ):

- *մահ.*

Հողը դնել /հողին հանձնել /հողին տալ – թաղել, հուղարկավորել: **Հողը գլխիդ/գլխիս, գլխին** (անեծք) – մեռնես/մեռնեմ, մեռնի, հողը արևիդ: **Հողի երեսին** - այս աշխարհում: **Հողի երեսից ջնջել** – ոչնչացնել, սպանել, կործանել, քարուքանդ անել: **Հողը մտնել** – թաղվել, գերեզման մտնել, մեռնել: **Հող դառնալ** – մեռնել, փտել, ոչնչանալ:

- *ոչնչացում, դժվարին պայմաններ.*

Ինչ հող տամ գլխիս/որ հողը (քարը) գլխիս տամ – ինչ անեմ, ինչպես վարվեմ, ոչ մի ճար չունեմ, հուսահատ դրության մեջ լինել, որ ջուրն ընկնեմ, ինչ

ծյուն տամ գլխիս: **Հողին /հողի հետ հավասարեցնել** – 1.կործանել, հիմնահատակ անել, 2.փխբ. վատաբանել, անարժեք ներկայացնել, հեղինակազրկվել: **Հողին հավասար լինել** – անպետք, անարժեք համարվել: **Հող դառնալ/հող ու մոխիր դառնալ** – հողի վերածվել, ոչնչանալ: **Մեկի գլխին հող մաղվել** – փորձանքի հանդիպել: **Մազերին հող ու մոխիր ցանել** – մեծ սուգ ապրել, ծանր վիշտ ունենալ:

Հանդիպում են դարձվածային միավորներ բազմազան իմաստներով, որոնց մի մասի համարժեքները առկա են դիտարկվող լեզուներում, մյուսները հատուկ են միայն մեկ լեզվի՝ **Հողին պահ տալ** – սերմանել, ցանել: **Կուսական հող** – երբեք չմշակված հող: **Հողի մարդ** – աշխատավոր, գյուղացի, երկրագործ: **Հող ու մոխիր անել** – վատնել, փչացնել: **Հողն ու մոխիրը քամուն տալ** – անհետ ոչնչացնել: **Հող/թոզ փչել աչքերին** – սուտ խոսքերով՝ իր գլուխը գովելով ուրիշին խաբել: **Հողը չի ծնել** – նմանը չկա (թե դրական և թե բացասական իմաստով): **Հողը խաբար չբանի /չբա (բրբ.)** – ասվում է մեռած մարդու պակասությունները հիշատակելիս, չլսի, չհաղորդվի: **Հողի հետ կապվել** – հողագործությամբ զբաղվել: **Հողը գլխին գալ /տալ** – 1.թշվառանալ, 2.ողբալ: **Հողը գլուխս** – ինչ ուզում է թող լինի, թեկուզ մեռնեմ: **Մի հողի, մի ջրի** – նույն կարգի (մարդկանց մասին): **Հողի գին** – չափազանց էժան, անարժեք:

Ռուսերենում **Земля / почва** բաղադրիչով դարձվածային միավորները համեմատաբար սակավաթիվ են և հիմնականում տարբերվում են իրենց արտահայտած իմաստներով, իհարկե, կան նաև համարժեքներ:

Предавать земле – թաղել: **Ложиться в землю** – մեռնել: **Как из-под земли вырос** – անակնկալ հայտնվել, գետնի տակից դուրս գալ, ամսպասելի երևալ: **Не слышать земли под собой** (հնց.) – բարձր տրամադրություն ունենալ: **Соль земли** – ամենակարևոր, գլխավոր: **Земля горит под ногами** – ստիպված լինել արագ փախչել: **Сидеть на земле** – լինել ծայրահեղ ծանր վիճակում, կարիքի մեջ լինել: **Видеть на три аршина в землю (под землей)** – խորաթափանց լինել: **Землю роет** – նպատակին հասնելու համար ակտիվություն ցուցաբերել: **Мерить землю** – քայլել, մեծ տարածություն անցնել ոտքով: **Зарывать (зарыть, закопать) талант (способности, знания) в землю** – տաղանդը հողում թաղել: **Как сквозь землю провалился** – հանկարծ անհետ կորչել, անհետանալ, to vanish into thin air. **Как (словно) из-под земли вырос** – հանկարծ, անսպասելի հայտնվեց, ասես գետնից բուսնեց: **Готов сквозь землю провалиться** – ամոթից, վախից ցանկանալ անհետանալ, գետինը մտնել: **Достать из-под земли** – գետնի տակից ճարել, բերել ամեն կերպ: **Садиться на землю /сесть на землю** – հողագործությամբ զբաղվել, հողի հետ կապվել: **Земля (почва) уходит из-под ног** – վիճակը անհուսալի, անհաստատ է դառնում, գետինը ոտքերի տա-

կից փախչել: **Почва колеблется под ногами** – գետինը ոտքերի տակ երերալ: **Терять почву под ногами / терять почву из-под ног** – վստահությունը կորցնել: **Нащупывать почву** – նախապես պարզել հնարավորությունը:

Ռուսերենում **земля, почва** բաղադրիչով դարձվածային միավորները հիմնականում նշանակում են՝ հանկարծակի հայտնություն, անհետացում, հիմք՝ կազմելով համապատասխան համարժեք դարձվածային միավորներ դիտարկվող երեք լեզուներում:

Անգլերենում **հող** բառին համապատասխանում են **earth, soil, ground** բառերը, ուստի դարձվածային միավորները ներառում են նշված բաղադրիչները:

Cost the earth - շատ փող արժենալ, թանկ լինել: **Mother earth** - մայր հող: **Go to earth** - թաքնվել: **Virgin soil** - խոպան, անմշակ հող: **A child of the soil / a son (daughter) of the soil** - տեղաբնակ, հողի զավակ, գեղջուկ: **One's native soil** - հայրենիք, հայրենի հող: **Racy of the soil** - բնութագրական տվյալ երկրի համար, վառ, արտահայտիչ:

Անգլերենում՝ **ground** բաղադրիչով դարձվածային միավորները ամենատարբեր իմաստներով ու կառույցներով ձևավորում են դարձվածքներ՝ խորհրդանշելով *մահ, ոչնչացում, հիմք, հենարան, դժվար պայմաններ*:

Below ground - մեռած, թաղված: **Above ground** - կենդանի, գոյություն ունեցող: **Level to (with) the ground (raise to the ground)** - հիմնահատակ քանդել, գետնին/հողին հավասարեցնել; գետնի երեսից սրբել, գետնին հավասարեցնել, ոչնչացնել, стереть с лица земли, сровнять с землей. **Prepare / clear the ground** - հող նախապատրաստել: **Cut the ground from under smb (smb's feet)** - ոտքերը գետնից կտրել, ինքնավստահությունից զրկել, պլանները խախտել, выбивать почву из-под ног. **Have one's feet on the ground / earth** - լինել գործնական մարդ, առողջ դատողություն ունենալ: **Be dashed to the ground** - ջախջախել, ավերել, հույսերը ի դերև ելնել: **Hold(stand) one's ground** - դիրքերը չզիջել, զինված պահպանել գրաված դիրքը: **Meet smb on his own ground** - համաձայնել ինչ-որ մեկի առաջադրած պայմաններին: **Be on slippery ground** - լինել դժվար իրավիճակում: **Wish (that) the ground would (open and) swallow one** - գետինը պատռվեր՝ մեջը մտնեի, ամոթից, անհարմարությունից անհետանալ [5]:

Կրակ, հող բաղադրիչներով դարձվածային միավորները հանդես են գալիս կառուցվածքային տարբեր տիպերով և կաղապարներով՝ համապատասխան տվյալ լեզվի քերականական առանձնահատկություններին: Անվանողական դարձվածային միավորներից առավել մեծաքանակը բայական կառույցներն են, քանի որ շատ անվանողական դարձվածային միավորներ հնարավորություն ունեն համալրվելու անորոշ դերբայով և վերածվելու բայականի [6]: Բայական դարձ-

վածային միավորների գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը կարող է ծավալվել տարբեր խոսքի մասերով: Երկանդամ բայական դարձվածային միավորներ են՝ *հող պատրաստել, հողը մտնել, հող դառնալ, հողը շոշափել, հողը քաղցրացնել, հողը արածել, կրակ առնել, կրակ գցել/դնել /ձգել, կրակ դառնալ, կրակ թափել, կրակ ընկնել , կրակը լափել, կրակը չաղացնել*, որոնք ունեն գոյական (եզակի ուղղ.-հայց)+անորոշ դերբայ կառուցվածքը:

Եռանդամ բայական դարձվածային միավորները հիմնականում ներկայանում են գոյական + գոյական + անորոշ դերբայ կաղապարով՝ *հողը գլխին գալ, գլխին կրակ վառվել, կրակի բաժին դառնալ, հողից հաց քամել*. գոյականները կարող են դրվել բոլոր հոլովներով:

Երկանդամ ածականական կառույցներից հանդիպում է ածականի իմաստով գործածվող դարձվածքների ամենատարածված կառույցը՝ գոյական (սեռական) + գոյական(ուղղական), որն ունի համեմատության արժեք՝ *կրակի գին, կրակի կտոր, ածական + գոյական* տիպի կառույց են *անծուխ կրակ, սև կրակ* դարձվածային միավորները: Գոյական + հարակատար դերբայ կառուցվածքային տիպին են պատկանում *կրակը ընկած, հողը մտած* դարձվածային միավորը, որտեղ որոշիչ հողը նշանակալի դեր է խաղում և ամրացնում է կառույցը:

Ռուսերենում հանդիպում են բայական երկանդամ **Предавать земле, Мерить землю, Нащупывать почву** (անորոշ դերբայ+գոյական), եռանդամ **Ложиться в землю, Сидеть на земле, Достать из-под земли** (անորոշ դերբայ + նախդիր + գոյական), քառանդամ **Зарывать(зарыть, закопать) талант (способности, знания) в землю** (անորոշ դերբայ + գոյական + նախդիր + գոյական) կառուցվածքային տիպերի դարձվածային միավորներ:

Անգլերենում հանդիպում են երկանդամ (անորոշ դերբայ + գոյական) կառուցվածք ունեցող *Catch(take) fire, Stand fire, Strike fire* եռանդամ (գոյական+շաղկապ+գոյական) *Fire and fury*, (նախդիր+թվական+գոյական) *Between two fires* դարձվածային միավորները, ածականական *as red as fire, Full of bush fire* դարձվածքները: Բայական դարձվածային միավորների գերակշիռ մասը բազմանդամ է:

Դիտարկվող երեք լեզուներում հանդիպում են նախադասություն – դարձվածքներ, որոնք ունեն հաղորդակցական բնույթ և հատկանշական են հենց այդ լեզվին ու, կարծես, պարունակում են ժողովրդի դարավոր փորձի խորհուրդը՝ *Հողի հետ մտնել, քարի հետ քաղվել* – չարաչար աշխատել, *Հող բռնես, ոսկի դառնա* – բոլոր գործերդ հաջողվեն, *Где хозяин ходит, там земля родит* – բարի տերը տնտեսության մեջ ամեն ինչից օգուտ է քաղում: *There is no smoke without fire* -առանց կրակի ծուխ չկա: *Worship the very ground one treads(walks) on-*

երկրպագել այն հողը, որով նա քայլում է (սիրահարների մասին), быть готовым целовать землю, по которой она(он) ступает. *Little chips light great fire*-փոքր փայտիկները մեծ կրակ են վառում. Կայծից բոց կբռնկվի: *A burnt child dreads the fire*- մեկ անհաջողություն ունեցողն ավելի զգույշ է դառնում: Դարձվածային նախադասությունները արտահայտում են միտք, ունեն ստորոգում, ավարտուն հնչերանգ:

Նախադասություն-դարձվածքները հիմնականում համընկնում են թևավոր խոսքերի և ասացվածքների հետ, որոնցում գործածվում են բայի դիմավոր ձևեր, ենթական և ստորոգյալը կարող են ունենալ լրացումներ: Դարձվածային նախադասությունները խոսքային պատրաստի կաղապարներ են և կարող են հանդես գալ որպես բարդ նախադասություններ: Յուրաքանչյուր լեզվի դարձվածքներում գործում են տվյալ լեզվին բնորոշ քերականական առանձնահատկությունները: Հայերենի դարձվածքներում բաղադրիչների կապը հիմնականում արտահայտվում է հոլովական վերջավորություններով, որը մասամբ հատուկ է նաև ռուսերենին, իսկ անգլերենում բաղադրիչների կապերն արտահայտվում են նախդիրներով: Հայերենում և անգլերենում իմաստատարբերակիչ դեր ունի նաև հողը:

Եզրակացություն: Բնությունը կազմող չորս տարրերից երկուսը խորհրդանշող՝ *կրակ*, *հող* բաղադրիչները օժտված են իմաստների բազմազանությամբ, դարձվածակազմիչ մեծ հնարավորությամբ և կիրառության բարձր հաճախականությամբ: Հայերենում, ռուսերենում և անգլերենում հանդիպող *կրակ* և *հող* բաղադրիչներով դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն որոշակի իմաստային և կառուցվածքային ընդհանրություններ, իսկ տարբերությունները պայմանավորված են տվյալ լեզվի և այդ լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողության յուրահատկություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Է.** Արդի հայերենի բացատրական բառարան.-Երևան: «Հայաստան» հրատ.-1976, I-II մ.-929, 1615էջ:
2. **Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա.** Հայաց լեզվի դարձվածաբանական բառարան.- Երևան: ԵՊՀ, 1975.-614էջ:
3. **Молотков А.И.** Фразеологический словарь русского языка. -М.: Советская энциклопедия, 1967.-543с.
4. **Kunin A.,** Comprehensive English-Russian phraseological dictionary.- Moscow: Russky Yazik Media, 2006. -1210p.
5. **Richard A. Spears,** American Idioms Dictionary, National textbook company, USA. -Moscow: “Russky Yazik”, 1991.-463p.
6. **Բաղիկյան Խ.Գ.** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները.- Երևան: ԳԱ հրատ., 1986.- 354 էջ:

Ա.Գ. ՍԵՏՐՍՅԱՆ

**ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ, ВКЛЮЧАЮЩИЕ
КОМПОНЕНТЫ “ОГОНЬ” И “ЗЕМЛЯ” В АРМЯНСКОМ, РУССКОМ И
АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ**

Рассматриваются фразеологические единицы, включающие компоненты “огонь” и “земля” в армянском, русском и английском языках. Представлены семантические, структурные, грамматические сходства и различия, которые зависят от структурных особенностей данных языков и языкового мышления разных народов.

Ключевые слова: фразеологическая единица, компонент, семантический, грамматические различия, структурные особенности.

H.G. PETROSYAN

**PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS *FIRE* AND *SOIL*
IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH**

Phraseological units with the components *fire* and *soil* in Armenian, Russian and English have been considered. Semantic, structural, grammatical similarities and differences have been introduced which depend on structural peculiarities of the mentioned languages and linguistic thinking of different nations.

Keywords: phraseological unit, component, semantic, grammatical differences, structural peculiarities.

ՀՏԴ 81'367.626:1

Հ.Կ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Ուսումնասիրվում է պատմահամեմատական լեզվաբանության հարցադրումներից մեկը՝ անձնական դերանունների ծագումը: Հետազոտության հիմք է ընդունվել այն փաստը, որ աշխարհի գրեթե բոլոր լեզուներում դերանուններն առաջացել են գոյականներից: Որոշ լեզուներում դերանունները դեռևս պահպանել են իրենց նախնական իմաստը, իսկ որոշ դեպքերում գոյականն առայսօր գործածվում է իբրև դերանուն: Ուսումնասիրության նյութ են դարձել տարբեր լեզվաընտանիքների, հատկապես հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզվաընտանիքների լեզուները: Ենթադրվում է, որ հնդեվրոպական անձնական դերանունների *man* և *ego* տիպերն առաջացել են գոյականներից, որոնց նախնական իմաստն է եղել՝ *մարդ*, *հոգի*:

Առանցքային բաներ. պատմահամեմատական լեզվաբանություն, անձնական դերանուններ, հնդեվրոպական լեզուներ, ֆիննաուգրական լեզուներ, նախնական իմաստ, դերանունների ծագումը:

Ավելի քան երկու հարյուրամյակի պատմություն ունեցող հնդեվրոպական լեզվաբանությունը շարունակում է բազում խնդիրներ առաջադրել: Հնդեվրոպա-